ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՊՀ գիտական և գիտատեխնոլոգիական
համագործակցության գծով
պրոռեկտոր, տ.գ.դ. պրոֆ.
_____ Ա.Խ. Գրիգորյան
3 12 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Թագուհի Արմենի Բարսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները(ՀՀ նյութերով)» թեմայով Ը.00.02 "Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում" մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

<u>Ատենախոսական աշխատանքի արդիականությունը</u>

Ատենախոսության ոլորտում իրականացվող բարեփոխումները ժամանակակից պայմաններում ի հայտ են բերում տեխնիկական, ֆինանսական, կազմակերպական, էկոլոգիական խնդիրներ, որոնք հիմք են հանդիսանում էներգետիկական համակարգի կարգավորման նոր ռազմավարական խնդիրների մշակման համար:

Քանի որ էներգիայի մատակարարումը և սպառումը կարելի է ներկայացնել որպես ինտեգրված հոսքային գործընթացներ, ապա վերջիններս կարող են դիտարկվել որպես հաջորդական տրամաբանական շղթա:

Դինամիկ զարգացող շուկայական միջավայրում էներգահամակարգը կառավարող է կարգավորող մարմինների խնդիրն է ոչ միայն հումքային, ֆինանսական և տեղեկատվական հոսքերի օպտիմալացումը, այլ նաև դրանց արդյունավետ կարգավորումը:

Հետևապես, անհրաժեշտություն է առաջանում համապատասխան մոդելների, մեթոդների և մեխանիզմների մշակման համար, ինչը հնարավորություն կտա

արդյունավետ կարգավորել էներգետիկական համակարգը՝ ներքին և արտաքին միջավայրի փոփոխություններին համապատասխան:

Այդպիսի գործոններից է հանդիսանում էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մոդելի ընտրությունը և դրա արդիական կարգավորման մեխանիզմների մշակումը:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել դասական տնտեսագետների աշխատությունները: Որպես տեղեկատվական հիմք են հանդիսացել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաշվետվությունները, ՀՀ տարաքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ԿԲ և Ազգային Վիճակագրության Ծառայության տվյալները:

Աշխատանքում կիրառվել են էկոնոմետրիկ, վիճակագրական, գործոնային, համեմատական, համակարգային վերլուծությունների և տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդներ:

<u>Ստացված արդյունքների և եզրակացությունների նորությունը</u>

Հետազոտության ընթացքում ստացվել են մեթոդական և տեսագործնական նշանակության նորույթ արտահայտող հետևյալ արդյունքները.

1. Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից քննարկվել են համակարգի սակագնի կայունացման, հետագա իրականացման հնարավորությունները և ներկայացվել են առաջարկություններ սակագնային քաղաքականության կատարելագործման ուղղությամբ:
2. Մշակվել են էլեկտրաէներգիայի սակագնի որոշման մեթոդաբանության նոր մոտեցումներ՝ հիմնված ծախսերի օպտիմալացման, կորուստների նվազեցման և օպտիմալ շահութաբերության մակարդակի սահմանման վրա:
3. Գնահատվել է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների օպտիմալ վարքի ազդեցությունը սակագնային մարժայի և էլեկտրաէներգիայի սակագնի վրա, որի համատեքստում մշակվել է էլեկտրաէներգիայի սակագնի որոշման նոր մեթոդաբանություն:

Աշխատանքի գործնական նշանակությունը

Ատենախոսության արդյունքների նշանակությունը կայանում է նրանում, որ մշակված մոդելները հնարավորություն են տալիս բացահայտելու էլեկտրաէներգիայի արտադրության, բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման և էլեկտրաէներգիայի սակագնի դինամիկ, ինչպես նաև միաժամանակյա փոխազդեցությունները:

Ստացված արդյունքները կարող են կիրառվել էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների, կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինների կողմից ամենամյա մշակվող գործունեության ծրագրի և ոլորտի հեռանկարային սցենարների մշակման գործընթացում:

Ատենախոսության բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության 134 անուն ցանկից և 11 հավելվածներից:

Ատենախոսությունը շարադրված է 149 (առանց հավելվածների) մեքենագիր էջի վրա:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, բերված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, արդյունքները, նրանց գործնական նշանակությունը, փորձարկումները և հրապարակումները:

Առաջին գլխում ուսումնասիրվել են էլեկտրաէներգետիկական շուկաների բնութագրման տեսամեթոդաբանական հիմքերը:

Երկրորդ գլուխում ուսումնասիրվել են ՀՀ էլեկտրաէնեգետիկական շուկայի կարգավորման արդի հիմնախնդիրները և սակագնային քաղաքականությունը:

Երրորդ գլխում ներկայացված է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի սակագնային արդյունավետ մարժայի ձևավորման ուղիներն և զարգացման հեռանկարները:

Հավելվածներում բերված են խնդրի լուծման հաշվարկային տվյալներ:

Գնահատական՝ ներառելով ատենախոսության դրական և բացասական կողմերը

Մեր կարծիքով ատենախոսությունում դրված խնդիրների հաջողակ լուծումը պայմանավորված է հեղինակի կողմից հետազոտության նկատմամբ ցուցաբերած համապարփակ գիտական և գործնական մոտեցմամբ:

Դրական գնահատելով կատարված աշխատանքը, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել հետևյալ դիտողությունները:

1. Ցանկալի կլիներ դիտարկել ՀՀ ՀԾԿՀ 18.08.2018թ. N 289L որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր կառուցվածքի և էլեկտրական էներգիայի առևտրի հայեցակարգը:
2. Ցանկալի կլիներ ստացված մոդելը ընդլայնել՝ ներառելով էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գործոնը:
3. Կարելի է մոդելի մեջ հաշվի առնել ինչպես ներդրումային գործունեության արդյունքը, այնպես էլ դրա հետ կապված ռիսկի բաղադրիչը:
4. Ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակի կողմից համակողմանի դիտարկվեին նաև տեխնիկական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հաղորդման և բաշխման ցանցերի սերնդափոխությունը:
5. Առկա են խմբագրական բնույթի մի շարք թերություններ:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ստացված արդյունքների գիտական արժեքը:

Թ. Բարսեղյանի թեկնածուական ատենախոսությունը ավարտուն գիտական հետազոտություն է, որն ունի տեսական և կիրառական նշանակություն:

Հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածները, ինչպես նաև ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսական աշխատանքի արդյունքներն ու եզրակացությունները նպատակահարմար է ներդնել էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների գործունեության ծրագրերի մշակման գործընթացում:

Թագուհի Արմենի Բարսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները(ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնա-

կարգով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.02 մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Թագուհի Արմենի Բարսեղյանի «Էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման կատարելագործման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը քննարկվել է ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի «Էներգետիկ ոլորտի տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի 19.11.2020թ. նիստում (արձանագրություն թիվ 4), որտեղ ներկա էին տ.գ.դ, պրոֆ. Ս.Մինասյանը, տնտ.գ.թ., դոցենտ Լ.Զարխիֆալակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Բաղրամյանը, տնտ.գ.թ.,դոցենտ Ե. Պետրոսյանը և ուրիշները:

ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի
ինստիտուտի «Էներգետիկ ոլորտի տնտեսագիտություն
և կառավարում» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆ. Ս.Ա.Մինասյան

ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի
ինստիտուտի «Էներգետիկ ոլորտի տնտեսագիտություն
և կառավարում» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Գ.Ք.Բաղրամյան

Ս.Ա.Մինասյանի և Գ.Ք.Բաղրամյանի ստորագրությունները հաստատում եմ

ՀԱՊՀ գիտական քարտուղար տ.գ.թ.,դոցենտ՝ Հ. Բալաբանյան